որ Վէզիր և զօրագլուխ էր Ա'տաբ Խալիֆային՝ տեսեալ թէ Լատինք դրժեցին դաշինն եւ բաղմութեամբ յարձակեալ են 'ի վերայ իւր, առ երկիւղին եւ հրդեհել զքաղաքն Մբսր, զի մի և նմա տիրեսցեն Լատինք, և բնակիչացն գաղթել 'ի Գահիրէ եւ ելանէր ծուխ քաղաքին զաւուրս 54։

Իսկ Խալիֆայն Ա'տաբ անկեալ 'ի վասանգ նեղութեան խնդրէր դտանել զելս հնարից. զի Լատինք պաշարեալ էին զինքն եւ չէր ինչ վստահ 'ի զօրավարն իւր վանել զթշնամիսն, որոյ վասն տրտմութեամբ եւ անմխիթար սրտիւ գրեաց թուղթ առ Սուլթանն Դամասկոսի Նուրէտտին՝ և խնդրեաց 'ի նմանէ հասանել 'ի Թիկունս. յաւելու Արաբացի պատմիչն թէ 'ի թղթի անդ եղեալ էր զհերս կանանց։ Սակայն զօրավարն Շաւէր ջանայր տակաւ ցածուցանել զցասումն սրտմտութեան Լատինաց, տուեալ նոցա 100,000 ոսկիս, զի մեկնեսցին 'ի Գահիրէ քաղաքէ։

Եւ եղեւ իբրեւ եհաս նամակ Ա'տաբայ առ Նուրէտտին, պատրաստեաց բանակ հզօր եւ զօրագլուխ նմին զՇիրքու եղբայր Էյուպայ, եւ զեղբօրորդի նորին զՍալահատտին նիզակակից նմին։ Թէպէտ նա բաղում անգամ հրաժարեցաւ 'ի գործոյ անտի, այլ յետոյ զիջեալ 'ի թախանձանս Սուլթանին և հօրեղբօր իւրոյ, ել 'ի ճանապարհ ընդ զօրսն։

Եւ հասեալ 'ի սահմանս Եգիպտոսի՝ մարտ եդին ընդ Լատինս և առին զԱղէքսանդրիա։ Լատինք դարձան յետս յԵրուսաղէմ։ Շիրքու եհաս 'ի Գահիրէ և եմուտ առ Խալիֆայն Ա'տաբ, եւ նորա սիրով ընկալեալ զնա՝ զգեցոյց նմա վերարկու պատուոյ, և դարձոյց զնա ուրախութեամբ 'ի վրանս նորա։ Իսկ զօրավարն Շաւէր խորհէր նենգութեամբ դաւաճանել զՇիրքու և զՍալահատտին։ Իրաղեկ լեալ այսմ Սալահատտինի՝ պատահեցաւ նմա 'ի ճանապարհի ուրեք, և կալեալ զձեռանէ նորա ցնցեալ ընկէց 'ի վայր 'ի ձիոյն, և փախեան արքն որք էին ընդ նմա. եհաս անդր և Շիրքու, և հատեալ զգլուխ Շաւերայ՝ պատաքեցին առ Խալիֆայն, ընդ որ ուրախացեալ նորա՝ եւ կոչել առ ինքն զՇիրքու, և զգեցոյց նմա զվերարկու Վէզիրութեան, և անուանեաց զնա Մէլիք Մանսուր և զօրա-